ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՏՀՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2026/12

ք. Երևան «01» 07 2026թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, որ գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԱՄԵ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Երևանի Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոցի վերանորոգում», «Երևանի թիվ 105 ավագ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Արագածոտնի մարզ, Արուճի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Արագածոտնի մարզ, Աշնակի Գևորգ Չաուշի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Արարատի մարզի Մասիսի միջնակարգ դպրոցի վերանորոգում», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավանի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգում» և «ՀՀ Սյունիքի մարզի Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած գրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը կազմում է 14 058 389 (տասնչորս միլիոն հիսունութ հազար երեք հարյուր ութսունինը) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

1 քմ-ի բերված արժեքում պետք է ներառված լինեն տվյալ տեխնիկական բնութագրի <Կատարման ենթակա մատուցվող ծառայությունների համառոտ բնութագիրը> բաժնի II-րդ փուլի աշխատանքների կատարման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը, ներառյալ հարկերը և տուրքերը, շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության ձեռքբերման, պարզ փորձաքննության համար նախատեսվող ծախսերը: Ընդ որում, տանիքի, ճակատների, մարզադաշտի (մարզադաշտի ցանկապատի սահմաններում), դպրոցի տարածքում գտնվող ճանապարհների և հրապարակների չափագրման և վերականգնման անհրաժեշտության դեպքում, այդ չափագրվող մակերեսները կգումարվի չափագրվող հարկերի հատակների մակերեսին: Տարածքի ցանկապատման, հենապատերի վերականգնման, գլխավոր մուտքի հարթակի, նրան հարող հատվածի և սալվածքների մակերեսները, ինչպես նաև կաթսայատան կարգաբերման ու առանձին տարրերի, սարքերի ու սարքավորումների և այլ հարակից աշխատանքների հետ կապված ծախսերը առանձին չեն հաշվարկվի և չեն գումարվի: Այդ աշխատանքների համար անհրաժեշտ գումարները պետք է հաշվառված լինեն 1 քմ-ի բերված արժեքում: Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը կհաշվարկվի վերանորոգվող շենքի, կամ մասնաշենքի սեփականության վկայականում նշված մակերեսի չափով: Այդ գումարը կվճարվի Խորհրդատուին այն դպրոցների համար, որոնց վերաբերյալ Պատվիրատուի առաջադրանքով կնախատեսվի շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն՝ I-ին և II-րդ փուլերի աշխատանքների ավարտից և Պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո: Այն դեպքերում, երբ I-ին փուլի եզրակացության հիման վրա տվյալ դպրոցի հետագա աշխատանքները պատվիրատուի կողմից կդադարեցվեն, Խորհրդատուին կվճարվի միայն տեխնիկական վիճակի ուսումնասիրման համար նախատեսված գումարը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի **30-ը:**

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսն

երի Նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ԱՐԱՄԵ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ադոնց 6/169
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 08270782
Հ/Հ՝ Հաշիվ 1-900011068120 Հաշիվ 2- 900011068138 Հաշիվ 3- 900011068146 Հաշիվ 4- 900011068153 Հաշիվ 5- 900011068229 Հաշիվ 6- 900011068245 Հաշիվ 7- 900011068310	Հ/Հ՝ 1570008306443000
Կենտրոնական գանձապետական	Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյան /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն՝ Արամ Սարգսյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«01» 07 2026 թ. կնքված
«ՀՏՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2026/12» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	ԳՄԱ ծածկագիր՝ CPV	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը*
1.	98111140/145	«Երևանի Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	2,540,033	1	ՀՀ, քաղաք Երևան	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
2.	98111140/146	«Երևանի թիվ 105 ավագ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	1,869,188	1	ՀՀ, քաղաք Երևան	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
3.	98111140/147	«ՀՀ Արագածոտնի մարզ, Արուճի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	1,599,786	1	ՀՀ Արագածոտնի մարզ, Արուճ	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
4.	98111140/148	«ՀՀ Արագածոտնի մարզ, Աշնակի Գևորգ Չաուշի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	1,699,945	1	ՀՀ Արագածոտնի մարզ, Աշնակ	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
5.	98111140/155	«ՀՀ Արարատի մարզի Մասիսի միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	3,557,240	1	ՀՀ Արարատի մարզ, Մասիս	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը

6.	98111140/157	«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավանի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	2,068,413	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գեղամավան	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը
7.	98111140/164	«ՀՀ Սյունիքի մարզի Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցի վերանորոգում» աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայություն	դրամ	723,784	1	ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ	Պայմանագրի կնքման օրից մինչև շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝
Ճափաբաժին 1-900011068120
Ճափաբաժին 2- 900011068138
Ճափաբաժին 3- 900011068146
Ճափաբաժին 4- 900011068153
Ճափաբաժին 5- 900011068229
Ճափաբաժին 6- 900011068245
Ճափաբաժին 7- 900011068310
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐԱՄԵ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ադոնց 6/169

ՀՎՀՀ՝ 08270782

Հ/Հ՝ 1570008306443000

Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ

Տնօրեն
Արամ Մարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«01» 07 2026 թ. կնքված
«ՀՏՀՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2026/12» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ տարբեր մարզերում մի շարք դպրոցների վերանորոգման աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության իրականացման

Մատուցվող ծառայությունների համառոտ բնութագիրը

Վերանորոգման աշխատանքների ընթացքում Խորհրդատուն պետք է պարբերաբար այցելի շինհրապարակ և վերահսկի կատարվող աշխատանքների որակը:

Խորհրդատուն վերահսկման աշխատանքների ընթացքում պարտավոր է՝

1. Կազմակերպել շինհրապարակի այցելություններն ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի:
2. Անհրաժեշտության դեպքում, այցելել շինհրապարակ ըստ Պատվիրատուի մասնագետների պահանջի:
3. Կատարել անհրաժեշտ խորհրդատվություններ Պատվիրատուի մասնագետներին և Կապալառուին շինարարության ընթացքում:
4. Գրավոր տեղեկացնել Պատվիրատուին հայտնաբերված թերությունների և շեղումների մասին, ներառյալ համապատասխանությունը անվտանգության ապահովմանը:
5. Համաձայնեցված լուծումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում տեղեկացնել Պատվիրատուին և ստանալ նրա համաձայնությունը:
6. Պատվիրատուի և այլ շահագրգիռ կողմերի համաձայնեցմանը ներկայացնել փոփոխված ծավալաթերթերը, Կապալառուի պայմանագրային նախահաշվով չնախատեսված աշխատանքների նախահաշվային արժեքները:
7. Ստուգել օգտագործվող նյութերի, և սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և այդ փաստաթղթերում բերված տեխնիկական տվյալների համապատասխանությունը մասնագրերով, նորմերով կամ համապատասխան տեխնիկական փաստաթղթերով նախատեսված պահանջներին:
8. Մասնակցել ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին՝ ստորագրելով համապատասխան փորձարկման ակտեր:
9. Ուսումնասիրել շինարարության ընթացքում առաջացած խնդիրները և Պատվիրատուին ներկայացնել դրանց լուծման տարբերակները և աշխատանքային ծավալները: Նոր, պայմանագրային նախահաշվում չներառված աշխատանքների ի հայտ գալու դեպքում ներկայացնել նաև այդ աշխատանքների միավոր գները՝ նախահաշվի տեսքով:
10. Վավերացնել Կապալառուի կողմից կազմված և վճարման ներկայացվող կատարողական ակտերը, ծածկված աշխատանքների ակտերը: Խորհրդատուն պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների որակի համար:
11. Ստորագրել շինարարության ավարտական ակտերը:

12. Վճարման ներկայացվող կատարողական ակտերը, ծածկված աշխատանքների ակտերը և շինարարության ավարտական ակտերը չվավերացնելու դեպքում գրավոր ներկայացնել պատճառները:

Խորհրդատուի աշխատանքների ընդունման կարգը

Հեղինակային հսկողության աշխատանքների ավարտ է համարվում շինարարության ավարտական ակտի ստորագրումը և հեղինակային հսկողության մատյանի ներկայացումը (վերջնական հաշվետվություն) Պատվիրատուին, որից հետո կձևակերպվի այդ առաջադրանքով նախատեսված աշխատանքների հանձնման ընդունման ակտը:

Խորհրդատուի հաշվետվությունները

Հեղինակային հսկողության պայմանագրով նախատեսված առաջադրանքի կատարման վերջնական հաշվետվություն է հանդիսանում պատշաճ կերպով լրացված հեղինակային հսկողության մատյանը, որը Խորհրդատուն պետք է ներկայացնի Պատվիրատուին այդ առաջադրանքով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտական ակտի ստորագրումից հետո, 5 օրվա ընթացքում:

Ծրագրի շինարարության ընթացքում, որպես ընթացիկ հաշվետվություն, յուրաքանչյուր կատարողականի հետ Խորհրդատուն Պատվիրատուին պետք է ներկայացնի հեղինակային հսկողության մատյանը, որտեղ պետք է արտացոլված լինեն հաշվետու ժամանակահատվածում իր կողմից կատարված այցելությունները, աշխատանքները և այցելություններին մասնակցած մասնագետները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ԱՐԱՄԵ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աղոնց 6/169
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 08270782
Հ/Հ՝	Հ/Հ՝ 1570008306443000
Զափաբաժին 1-900011068120 Զափաբաժին 2- 900011068138 Զափաբաժին 3- 900011068146 Զափաբաժին 4- 900011068153 Զափաբաժին 5- 900011068229 Զափաբաժին 6- 900011068245 Զափաբաժին 7- 900011068310	Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Կենտրոնական գանձապետարան	
Գործադիր տնօրեն Աշոտ Ղազարյան	Տնօրեն՝ Արամ Մարգսյան
___________________ /ստորագրություն/ Կ.Տ	___________________ /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«01» 07 2026 թ. կնքված
«ՀՏՀՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2026/12» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140/145	Հեղինակային հսկողություն	-	-	-	-	-	-	2032020	2032020	2032020	2540033	2540033	2540033	2540033
2	98111140/146	Հեղինակային հսկողություն	-	-	-	-	-	-	1495350	1495350	1495350	1869188	1869188	1869188	1869188
3	98111140/147	Հեղինակային հսկողություն	-	-	-	-	-	-	1279820	1279820	1279820	1599786	1599786	1599786	1599786
4	98111140/148	Հեղինակային հսկողություն	-	-	-	-	-	-	1359950	1359950	1359950	1699945	1699945	1699945	1699945
5	98111140/155	Հեղինակային հսկողություն	-	-	-	-	-	-	2845790	2845790	2845790	3557240	3557240	3557240	3557240
6	98111140/157	Հեղինակային հսկողություն	-	-	-	-	-	-	1654730	1654730	1654730	2068413	2068413	2068413	2068413
7	98111140/164	Հեղինակային հսկողություն	-	-	-	-	-	-	579020	579020	579020	723784	723784	723784	723784

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝
Ճափաբաժին 1-900011068120
Ճափաբաժին 2- 900011068138
Ճափաբաժին 3- 900011068146
Ճափաբաժին 4- 900011068153
Ճափաբաժին 5- 900011068229
Ճափաբաժին 6- 900011068245
Ճափաբաժին 7- 900011068310
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐԱՄԵ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ադոնց 6/169

ՀՎՀՀ՝ 08270782

Հ/Հ՝ 1570008306443000

Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ

Տնօրեն՝
Արամ Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 01 » 07 2026 թ. կնքված
«ՀՏՀՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2026/12» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«01» 07 2026 թ. կնքված
«ՀՏՀՀ-ՀԵՂ-ՄԱԾՁԲ-2026/12» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն